# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
# ԲԵՐՔԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերքաբեր համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Բերքաբեր, 098 00 80 13, berqaber.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 01-Ա

### ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով , համայնքի ավագանին որոշեց `

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ԲԵՐՔԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՃՇԳՐՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ԲԵՐՔԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹԹ. ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՍԱՅԱՆ ՆՈՒՆԵ
2. ԹԱՄՐԱԶՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ
4. ՄԱՅԻԼՅԱՆ ԷՄԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐԻԿ ՄԱՂԱԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերքաբեր համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Բերքաբեր, 098 00 80 13, berqaber.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 02-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ավագանու անդամ Արմեն Մադաթյանը ծառայության է անցել զինված ուժերում և դիմում է ներկայացրել լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին :

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը ,հիմք ընդունելով անձնական դիմումը ՝ համայնքի ավագանին **որոշեց**

1. Վաղաժամկետ դադարեցնել Արմեն Մադաթյանի ավագանու անդամի լիազորությունները

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրամը հաջորդող օրվանից :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՍԱՅԱՆ ՆՈՒՆԵ
2. ԹԱՄՐԱԶՅԱՆ ՌՈՄԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ
4. ՄԱՅԻԼՅԱՆ ԷՄԻԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐԻԿ ՄԱԴԱԹՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
# ԲԵՐՔԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերքաբեր համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Բերքաբեր, 098 00 80 13, berqaber.tavush@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 03-Ն

### ԲԵՐՔԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՃՇԳՐՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը ավագանուն ներկայացրեց 2017 թվականի ճշգրտված բյուջեն հետեվյալը՝

1. եկամուտների գծով 12399,0 հազ.դրամ

2. ծախսերի գծով 12492,6 հազ.դրամ

3. դեֆիցիտի ծածկմանն ուղղված մօջոցներ 93,6 հազ.դրամ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով ,համայնքի ավագանին **որոշեց ՝**

1. Հաստատել Բերքաբեր համայնքի 2017 թվականի ծշգրտված բյուջեն ՝

ա) եկամուտների գծով 12399,0 հազար դրամ

բ) ծախսերի գծով 12492,6 հազար դրամ

գ) դեֆիցիտի ծածկմանն ուղղված միջոցներ 93,6 հազար դրամ

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ / հավելված 1 /

3. Հաստատել Համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ /հավելված 2/

4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման ՝ / հավելված3/

5. Սահմանել , որ

ա) ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում ՝ պահպանելով ծախսերի համամասնությունները

բ) Թույլատրել համայնքի ղեկավարին գանձապետական հաշվի 2016 թվականի տարեվերջյան ազատ մնացորդն ինքնուրույն ներառել 2017 թվականի բյուջեի եկամտային մասում և ծախսային մասում ընդգրկել առաջնահերթություն պահանջվող ծախսերի ֆինանսավորման համար :

գ) Ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման նախատեսված հոդվածների միջև << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի3-րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումները չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 3 %-ը :

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՍԱՅԱՆ ՆՈՒՆԵ

2. ԹԱՄՐԱԶՅԱՆ ՌՈՄԱՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

4. ՄԱՅԻԼՅԱՆ ԷՄԻԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐԻԿ ՄԱՂԱԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ**
**ԲԵՐՔԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերքաբեր համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Բերքաբեր, 098 00 80 13, berqaber.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 04-Ն

## ԲԵՐՔԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 - 2021ԹԹ. ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը՝ ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության , ինչպես նաև Բերքաբեր համայնքի հետ համատեղ ՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության աջակցությամբ նախաձեռնել է համայնքի 2017-2021 թթ. համալիր զարգացման ծրագիրը :

Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության , սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի համալիր գնահատման , առկա ներուժային հնարավորությունների (բնական , աշխարհագրական , տնտեսական , սոցիալական, ֆինանսական , մարդկային) հաշվառման արդյունքում :Այն համայնքի զարգացմանն ուղղված փաստաթուղթ է , որը հիմք է հանդիսանալու տեղական կառավարման բոլոր մակարդակներում համապատասխան քաղաքականության իրականացման համար :

Ծրագրի գաղափարախոսությունը համահունչ է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին, ՀՀ կայուն զարգացման ծրագրին , Հայաստան - ՄԱԿ զարգացման աջակցության 2016-2020 թթ. ծրագրին, ՀՀ Տավուշի մարզի 2016-2020 թթ. զարգացման ծրագրի նախագծի դրույթներին :

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով ավագանին **որոշեց ՝**

1. Հաստատել բերքաբեր համայնքի 2017-2021 թթ. համալիր զարգացման ծրագիրը (կցվում է առանձին հավելվածներով).

2.Առաջարկել Բերքաբեր համայնքի ղեկավարին միջոցներ ձեռնարկել ծրագրով նախատեսված աշխատանքները ողջ ծավալով իրականացնելու համար :

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից ։

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՍԱՅԱՆ ՆՈՒՆԵ

2. ԹԱՄՐԱԶՅԱՆ ՌՈՄԱՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

4. ՄԱՅԻԼՅԱՆ ԷՄԻԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐԻԿ ՄԱՂԱԹՅԱՆ**